




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԵՐԿԵՐ

ՈՒՐԱՑՄԱՆ ԵՒ ԶԼԶՈՒՄԻ

Ա.ԳԼԵՃԵԱՆ

269

891.99
4-63

M. MINASIAN



891.93

9-63

6424-1

P o e m s
by
Alexander Kludjian

Published
by
The Author



Printed in the United States of America
By The Baikal Press, Boston, Mass.

2013

ԵՐԿԵՐ

ՈՒՐԱՑՄԱՆ ԵՒ ԶԱՋՈՒՄԻ

	ԱԼ. ԳԼԸՃԵԱՆ	
	●	
1	9 3 8	
	Ն Ի Ի Ե Ո Ր Ք	

ՄՐՏԱԳԻՆ ՆՈՒԷՐ

Շունի մը,

Որ չ'ուզեց գաղթական ելիլ, ու նահատակուեցաւ.
Եւ որուն կմախքը որջի մը առջեւ փռուած գտան հտֆէն,
Ի՛ր որջին, ու կգակը հողին խրած: Հո՛ղ՝ գոր պաշտպանել
ուխտած էր իր տիրոջ:



3268-23

Իսկ տէ՛րը.—

բի՛ռ՛ւ, կ'ըսեն քէ հայ մըն էր ան, ու հիմա, իր հողէն
հեռու՝ անդառնալիօրէ՛ն, հայրենալուսի մըրկող ապաշաւը
իր հոգւոյն, կը մեռնի՛ ալ, քիչ մը ամէն օր: Ու
չի հատնիր...



Յառաջաբանի Տեղ

ՎՇՏԻ ՍԱՓՈՐԷՆ

Աչքն՝ առանց լոյսի, բաց վէրք մ'է, — աչք չէ՛.
Սիրտն՝ առանց յոյզի, պա՛րկ մ'է լոկ, — սիրտ չէ.
Գանկն՝ առանց լոյսի, յոյզի ողորման
Թանձրացած ժահրի երկինք մ'է, — գանկ չէ.

Ու մարդն ապերախտ՝ ամուլ ու խոպան
Աստծու մը սերմին տականքն է, — մարդ չէ:

Կեանքի սահանքը չի ճանչնար թումբ, — տե՛ս.
Բռնութեան քամին հեծքն է հոգւոյն, — տե՛ս.
Արիւնդուշտ մարդիկ բոլոր դարերուն
Սարսափը դարձան, գիրքըդ կարդա, — տե՛ս.

Բայց խաչին վերեւ տուայտող մարդուն
Գլուխն աւելի մօտ է Աստծոյն, —տե՛ս:

Մարդն հո՛ն մարդուն դէմ դայլ եղաւ, — ինչո՞ւ.
Գիւղն որ ինձ սնոյց մոռցա՛ւ զիս, — ինչո՞ւ.
Ապ՝ խելառ ճիչ մը չըթունքիս վրայ
Ծաղկայեռ ճամբէն կոյր անցայ, — ինչո՞ւ.

Ու երբ դող ի դող երգել զինք ուսայ,
Փշուր առ փշուր տա՛ւ դարձայ, — ինչո՞ւ...

Յ. Ա. ի Ալպոմէն

Թ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն

Կ'ըսեն՝ տուաւ, Տէ'ր, Որդիդ խաչեցեալ,
Անառակ կնկան, մարդկանց կողահերձ,
Այլին ճօճացող աւաղակին ալ,
Խօսքը թողութեան գահիդ երկնայեց:

Խօսքը թողութեան գահիդ երկնայեց
Դիեցուց ապա կրօն մը անբաւ.
Վախճանին դիմող մարդը վշտահեծ
Ներման քաղցրութիւնն անկէ ստացաւ:

Ներման քաղցրութիւնն անկէ՛ ստացաւ
Ուխտեալ աշակերտ այլ եւ ուրացող
Առաքեալն անդամ, — յետոյ անդրաւ
Հաւատքին գրեց թուղթերը կոթող:

* * *

Օր մ'ես ուրացայ հայրենի իմ տան
Անունն որ կապեց պապերուս պսակ.
Հիմա զղջումիս հունտն հազար բուրեան
Գարուն է հագեր. դառնա՛ր ծլարձակ

Նոր շունչ, նոր հաւատք, նոր երգ կուրծքիս տակ...

ՈՒՐԱՅԱՅ ՔԵՋ - ԶԻ ՄՈՌՑԱ՛Յ . . .

Ուրացա՛յ քեզ, — չի մոռցա՛յ . . .
Այլ դեռ կ'ըզամ վատութիւնը մատուրներուս դարութեան,
Եւ չթններուս գարշ ու դեղին վկայութիւնն ալ հիմա,
Որ զիս ա'յսպէս, վտարանդի՛, յանձնեցին մերկ՝ անվարան,
Ազգի մ'օտար դաւկութեան:

Ուրացա՛յ քեզ, — չի մոռցա՛յ . . .
Ըսին՝ կ'ըլլայ փայլն արծաթին սփոփանքըս հոգեցօղ.
Վարձու գիրկեր իմ պարմանի խօլ յոյգերուն մօտ, մեղա՛յ,
Հովիտ անդորր: Մինչ ես որպէս վտակ մը փոքր՝ դող ի դող
Դարձայ երկրի՛ն սրբահող:

Ուրացա՛յ քեզ, — չի մոռցա՛յ . . .
Շպարն երբեք դոյն չի բռնեց թուխ այտերուս կիսամեռ.
Օտար ձեւեր զիս իմ մէջըս ծաղրերգեցին անխնայ.
Օտար տղաք, օտար ձայներ, լոկ յուշն եղան գիւղին մեր
Հայ մանուկին դանդրահեր:

Ուրացա՛յ քեզ, — չի մոռցա՛յ . . .
Հրաշապատում զարթօնքիդ մէջ ապաժաման ես պուէտ,
Նոր երգերուդ հաւատարմարժ չեփորումին հեռակայ,
Կ'ուզեմ ձայն տալ, կ'ուզեմ երգել, ու աննուաճ անունէդ
Տանի՛լ պատգամն երկնալիւր:—

«Հայրենիքներ կ'ուրացուին, ա՛հ, չե՛ն մոռցուիր,
չե՛ն մոռցուիր»

ՏՂԱՍ, ՉՈՒՐԱՆԱՍ

Որպէս զի դուն չըլլաս գոյակ մ'անվաւեր,
Կամ ամբարիշտ հաղորդութեան ընկեցիկ
Երեխան զոր կը լքանեն կարեւիւր,
Կ'տամ քեզ կնիքն ազգանունիս զօրավիգ:
Մարդու պա՛րտքս է, տղաս, չի մոռնաս,
Զի մոռնա՛ս:

Յարկիս յոյսն ես, յոյսիս լոյսն ես: Կը հսկեմ
Արդ քեզ գգուող օրրանին մօտ փափկաբարձ.
Ու զիս հայցող թաթիկներուդ կոչին դէմ՝
Կ'ըլլամ գինով, կ'ըլլամ ծառայ մը անվարձ:
Սիրոյս ձա՛յնն է, տղաս, չի մոռնաս,
Զի մոռնա՛ս:

Ինչ որ ուսայ հաստ գրքերէն իմաստուն,
Ինչ որ հոգւոյս եթերին մէջ ուռճացաւ,
Կ'ուզեմ երկնէ՛լ ականջիդ մօտ, — քու լեզուն
Հեզել սորվի մեծ խորհուրդին ձեւն անբաւ:
Մտքիս պա՛հն է, տղաս, չի մոռնաս,
Զի մոռնա՛ս:

Ա՛լ քովս ի վեր, քովս ի վե՛ր դուն կ'ընծիւղիս,
Ես քեզ յենակ փոթորկին դէմ ամեհի.
Երբ շանթաճիդ հրասիւնն իյնայ բոց ճակտիս,
Պիտի յիշե՛մ, — ծառն արմատին կը նայի:
Ոյժիս փա՛ռքն է, տղաս, չի մոռնաս,
Զի մոռնա՛ս:

Իսկ երբ մեռնիմ ու դուն կրես ծիրանի
Գօտին ցեղիս յաւերժական փաստն անխոց,
Կապէ սի՛րտըդ արտերուն իմ հայրենի,
Զի պարտք է տալ տասնորդն հասկին լիաժոյ:
Սերմին տո՛ւրքն է, տղաս, չի մոռնաս,
Զի մոռնա՛ս:

Կտակս է այս. — մոռցի՛ր ինչ որ քեզ բերի.
Մոռցի՛ր տքուն հսկումներուս վարձն անհաս.
Մոռցի՛ր կրօնս, մոռցի՛ր Աստուա՛ծս ալ բարի...
Բայց իմ տանջուած հայրենիքըս չի մոռնաս,
Կ'անիծեմ քեզ, տո՛ւրքըդ չ'ուրանաս,
— Տղա՛ս, չուրանա՛ս...

Ը Լ Լ Ս Յ Ի

Աշխարհ ձե՛ղի, — երկնասլաց
Արարատի կողին հիւսուած
Հազար թռչնոց ես ըլլայի՛ր,
Բո՛յնն ըլլայի:

Խրախճանք ձե՛ղի, — հոգեհմայ
Վանայ լճի կուրծքին վրայ
Պարող ձկանց ես ըլլայի՛ր,
Ծա՛փն ըլլայի:

Համայնք ձե՛ղի, — սա ծաղկազարդ
Օրրանին մէջ ննջող զուարթ
Հայ մանկիկին, ա՛խ, ըլլայի՛ր,
Սի՛րտն ըլլայի:

Ո Ղ Ջ Ե Ր Թ

Համայնական ընծաներուն հետ ե՛ս ալ,
Սիրո՛ւն ուրբիկ, երթի՞դ համար վաղն առտու,
Զոյգ շապիկէս կ'ուզեմ մէկը քեզի տալ՝
Մերկ մարմինը ծածկելու:

Հարուստն եթէ ցուլ մը զոհեց՝ քեզ նուէր,
Ես՝ այլ արդէն ճակատագրիդ բախտակից,
Ուղեւորի պայուսակըդ եմ դրեր
Կէ՛սը բրդուն մը հացիս:

Դրացուհւոյս երգերուն հետ հոգեթով,
Գիրկ գիրկ վարդեր, համբոյր, ժպիտ լուսավառ՝
Ահա՛ հոգւոյս ծաղկաստանէն խայտանքով
Ես կը բերեմ քեզ համար:

Այժմ ալ գնա՛, գնա ուրբիկ, խաղաղի՛ն
Ոտքերուդ տակ ծով ու ցամաք, — կ'աղօթե՛մ:
Աղօթներըս կեանքիդ համար պիտ' կ'անգնին
Վա՛հան՝ հովուն, մը՛րկին դէմ:

Քանի արցունք, քանի քերթուած վշտակերտ՝
Ես հայրենի կարօտներու ձօնեցի.
Բայց այս գիշեր քեզ կը մաղթեմ բարի երթ
Առանց ցաւի ու լացի:

Եղբայրական համբոյրներու ի խնդիր,
Վերջին անգամ բեր սա ճակատըդ խոնարհ,
Եւ չթնեմէս երգ մը փրցուր ու հոն դի՛ր, —
Հազա՛ր բարի-ճանապարհ:

ԵՐԿՐԻ ՍԷՐ - ՎԵՐՋԻՆ ՍԷՐ

Ով մայր, ես ի՞նչ ընեմ որ
հաղաղի ծովն հոգւոյս.

Մայր իմ, մա՛յր սիրեցեալ
հաղաղեցնող ձեռն իմն տուր

ՎԱՀԱՆ ԹԵՔԷՆԱՆ

Շան երախէն ինկած ոսկոր մը անպէտ՝
— Մանչը «սոված հայ» մըն էր —
Օր մը դարձեալ շուրջպար բռնեց կամին հետ.
Ա՛լ չունեցաւ հացի սէր:

Որ հանդարտի տառապանքը սրտին մէջ,
Հո՛ւրը միսին՝ անյազ դեռ,
Տուաւ կուրծքը կուրծքի մը դէմ փողփողէջ.
Զինք լիացուց կնկայ սէր:

Ինչ որ երէկ յոյզ էր, երա՛զ լուսայորդ՝
Ծիւն արիւնին պտղաբեր,
Այժմ աւարտած պարտէզ մըն է, ինք պահնորդ
Մարդո՛ւն՝ հագած «զաւկի սէր»:

Բայց դուն ի՞նչպէս մտար իր մէջ, ցեղի՛ս ձայն,
— Դո՛ւն անողոք երկրի՛ սէր.
Կեանքն համօրէն յափրացում է, — դո՛ւն միայն
Զի լեցունեցա՛ր, ե՛րկրի սէր:

Ճամբան մոլոր, կոկորդն հինցած խենթի պէս
Նորէն կ'երգէ այս գիշեր.
Ամէ՛ն գիշեր: Ու մերթ հծծիւն մ'է կարծես.
«Ա՛հ, երկրի՛ սէր — վերջին սէր...»

1934

Լ Ս Է՛, Հ Ո՛ Ղ

Բայց դուն ի՞նչպէս մտար իր մէջ, ցեղի՛ս ձայն,
Դուն անողոք երկրի սէր.
Կեանքն համօրէն յափրացում է, դո՛ւն միայն
Զի լեցունեցա՛ր, ե՛րկրի՛ սէր:

Ա. Գ.

Սէրըդ՝ անմեռ ցաւի նման, լսէ՛, հո՛ղ,
Քուրջերուս տակ, ե՛ւ վերմակին՝ սնդուակէ,
Երկրէ երկի՛ր կրեցի ես՝ սրտադող
Յդի մօր պէս որ իր զաւկին կ'սպասէ...:

Կարծեցի թէ պիտի ծոցըս պարպո՛ւէր...
Լենար այնտեղ անդորրն անվերջ օրորով.
Կարծեցի թէ վայելքէն ետք ամէն սէր
Յափրացում է կամ պատրանք մը ծովէ ծով:

Ու յողնաբեկ գնացքն երբ հոս կանգ առաւ,
Դո՛ւ, լիութիւնն ըղձանքներուս լուսաշող,
Եւ երազին մարմին հագած կեանք անբաւ

Հայրենի՛ հող, — հոգւոյս՝ կրա՛կ, աչքիս՝ ցօ՛ղ
Տուի՛ր՝ ու սա մատուրներուս ալ ծարաւ
Ե՛րգ մ'որ հիմա կը պատուէ՛ զիս, լսէ՛, հո՛ղ:

Երեւան, 1935

ԹՈՒՂԹ ՊԵՐՍԵՒԱՆՔԻ

Հրապ... գաղբ... գաղբ...

Մեռելներու դամբանին
Ո'չ մէկ չիրմաքար,—
Արեւն՝ հսկուն, կուրցած, հին
Աստծու մ'աչքն ըլլար:

Հողմ անպարփակ, մրրկի սա
Շուրթիս ալէլուն,—
«Հողը վըրան ծանր'ը դայ
Անոնց ամէնուն»:

Որ չը տեսնեմ, չը վա'ռի
Սուգի ոչ մէկ լոյս,
Տունիս ջահերն վար առի...:
Եւ ա'ն՝ որ անյոյս

Լեզուատ սուրբի մը հանգոյն
Կը նայի ինծի,
Միակ մոմս է որ իսկոյն
Պատրոյզն հանեցի:

Մեռելներու դամբանին
Ո'չ մէկ չիրմաքար,—
Արեւն՝ հսկուն, կուրցած, հին
Աստուծու մ'աչքն ըլլար:

Իմ վաղամեռ մանկութեան
Սուգն ինձ ո'վ բերաւ,
Դէմքիս՝ թախիծ, աչքիս՝ լայն
Լուսի'նը խոնաւ:

Եւ արդ դատիլ, վա'րձ տալ՝ զիս
Վարձողին յարմար,
Ու զգա'լ միշտ՝ իմ զաւկիս
Երկրին մէջ՝ օտա'ր:

Հողը, զանոնք որ պիտի
Կրճէ օրն ի բուն,
(Եւ զիս՝ անաւի ծով վշտի
Աւա'զը փխրուն)

Հողը ծանր'ը դայ վրան
Անոնց՝ որ ընդհուպ
Ալ չը յառնե'ն... ու ինձ տան
Դարձեալ դաղթի ցուպ:

Մեռելներու դամբանին
Ո'չ մէկ չիրմաքար,—
Արեւն՝ հսկուն, կուրցած, հին
Աստծու մ'աչքն ըլլար:

1935

Տ Ա Պ Ա Ն Ա Դ Ի Ր

Հաւատքըս խախտած որո՞ւն «Տէր» կանչեմ .
Կինը անհաղորդ որո՞ւն «Սէր» կանչեմ .
Հացն օրէնք դարձած երբ զիս կը քանդէ,
Կեանքը անբեւեռ զուրկ լոյս ու խանդէ,
Ըսէ՛ք, ալ ի՞նչպէս «երգէ, սի՛րտ» կանչեմ, —
Այս կո՛ւրծքն ալեծուկի ո՞ւր տանիմ զարնեմ . . .

Պ Ա Տ Ի Ժ Ը

(Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ . . .)

Ո՞րն աւելի ծանր է, հօ՛բար. —
Մերժում ձեռքի՞նք (. . . եւ թողուլ՝ ան տակաւ մոռնայ դատն ու հրճուի՞նք .)
Թէ սեղմումը: (. . . որ մատներէն եղբայրասպան արիւնը՝ վա՛ր,
Զինք հալածող ձայնի մը պէս իյնայ կուրծքին դէմ զարնուի:)

Ո՞րն աւելի խոր կը խոցէ. —
Զէնքը լպիրչ հայհոյութեա՞ն, ոյժըդ վատնող գող մտերիմ,
Թէ խօսքն անճառ իմաստութեան եւ հեղնանքի թուքը բոցէ,
Երբ մերկանայ որպէս եղբայր սա չպարուած մարդը ճղճիմ:

Ո՞րն աւելի թո՛յն է՝ մրո՛ւր. —
Ուրանա՞լ զինք. (հայրըդ հայրն էր) . ըսել «թիւրք ես դուն» ու ստե՞լ,
Թէ բռնել զինք որ բարձրանա՛յ, հասնի եղբօր շուրթիդ մաքուր,
Ա՛յ հազագէդ՝ որոտաձայն, ձա՛յնն Աստուծոյ, ձա՛յն անարգել,
— «Կայէ՛ն, կայէ՛ն» . . . ու գահավէժ ձգել հատնի փշուր առ փշուր:

Ս Պ Ի Ն Ե Ր

Կը թողուա, ո՛վ Տէր, ձիգ ու հրեղէն
Ճանկեր շանթերու երկինքը պատռեն:
Բայց վաղը դարձեալ անհունն է անեղծ,
Ու երեկոյեան կապոյտն աստղայեղջ
Կը փթթի զերդ վարդ՝ բուրեղով չորս դին
Սէրեր, անուրջներ, գգուանքներ լռին:

Ծովափ մը անդո՛յր. — Մի խենթ նկարիչ
Անդադար գողնայ երանգներ քիչ քիչ
Լուսածիր ալեաց շունչերէն աղու:
Չե՛ս յուշեր ալ, Տէ՛ր, սա վայրն ահարկու
Ուր Ափրոդիտի պորտը ալեյոյզ
Խեղդած էր երէկ տղեկ մը անյոյս:

Ահա թաւուտքին գոգն ինկած՝ վայրի
Ճիչ մը աղէխարչ, — սկիւռ մը բարի
Արնած՝ ցինի մը ժիր ճանկերուն մէջ
Կը հատնի տակաւ, — մինչ պահիկ մը վերջ
Կամիս, ո՛վ Տէր, նոյն ոստէն հոգեղմայլ
Աղօթք մը ծորի — լորերու դայլայլ:

Ժամերն հեւ ի հեւ խուճապ մ'են կարծես.
Տարին կը դառնայ պառաւ ձիւնադէս,
Վերջալոյսն, ո՛վ Տէր, կ'ըսենք, ա՛լ տանի.
Պատանքէ մեր հին ցաւերն բիւր, քա՛նի:
Բայց հո՛ն վերջընթեր չող մը՝ սեւաչուի
Նործինի մ'ընծիւղ կեանքին մէջ հիւսուի:

Միայն խորագգած սի՛րտը թաքթաքուր,
Ո՛հ, երբ արիւնի խօսքէ մը շամփուր,
(Յաճախ փայփայուած մատներ մտերիմ
Կամ պճեղն եղբօր մը հըրի հոն, Տէր իմ)
Կը պահէ սպին՝ ու հետքն ալ՝ անջինջ՝
Քարի մը որ մեղ թուած էր ոչինչ:

* * *

Կ'ուզեմ մոռնալ, Տէ՛ր, մոռնա՛լ ալ՝ առջի
Տարուան պարտէղն ուր չորցած նարնջի
Կեղեւի մը տակ դաշոյն մ'ինձ ծանօթ
Փշրեց երակ մը սրտիս մէջ փոթոթ:
Ներել կ'ուզեմ, սի՛րտ, ներել՝ ու անյայտ
Թաղել — թէ կրնամ — փոսիկն արնացայտ:



ԻՆՁ Է ՀՈԳԻՆ

Ի՞նչ է հոգին, մարդու հոգին, ի՞մ հոգին.
Միտէս անջատ՝ անո՛վ սնած Աստուած մ'է,
Զիս ուսերուն երկնէ երկի՛նք կը ճեմէ:

Կը դիտեմ զինք, մարդու հոգին, ի՞մ հոգին.
Դէմքը ճաթած գինով մըն է ան երբեմն,
Ու տարածամ ողբ մը զամուսած աչքիս դէմ:

Կը ճանչնա՛մ զինք, — հողմերուն հետ ա՛ն է, ա՛ն,
Անվերջ անցնող բայց եւ անդարձ իրերուն
Ճիչն անսուղ գրկած կ'երթայ օրն ի բուն:

Մերթ փրփրերախ աղեգալար ովկէանին
Ժանտատեսիլ սարսափն է որ կ'զգենու
Մարդու հոգին, ա՛ն, ի՞մ հոգին: Մերթ աղու

Երեխայ մ'է, որ իր ջարդուած պուպրուկին
Վիշտն անչա՛փ դեռ հեծկլտացող սրտին մէջ
Կ'երթայ փնտռել գթոտ կնկայ մը անչէջ

Գողանքներուն խաղաղութիւնն հեշտաբոյր:
Ա՛հ, երբ լուծուի կրկներեւոյթն այս պահին,
Փլչի տունը ու կորսուի փականքն հին,

Ի՞նչ է հոգին, մարդու հոգին, ի՞մ հոգին:

Մ Ա Հ Ա Ջ Դ

(Ազուռ կնկայ մը որ դեռ կ'ապրի)

Ըսի, — ի՞նչ էր այն մթապար
Արցունքն որ սա սպիտակ
Վարդ այտերուդ փոսիկն ի վար
Ինկաւ կայլակ առ կայլակ:

Ըսաւ, — յոյզի ժպիտն էր ան
Վարար սրտիս փողփողէջ,
Երբ շուքն ինկաւ ծաղկին մահուան
Ոորն աչքերուս լճին մէջ:

ՄԻՆՁ ԲՈՒՐԵԱՆ ԵՍ

Գաղտուկ հովը ծոցդ էր պատուեր
Մթնշաղի մ'հսկումին տակ,
Մատուռներըս երբ վշտերեր
Գտան քեզ հոն՝ լո՛ւռ, գլխահակ:

Քնքուշ, թախծոտ, մանիշակ դու,
Ինչպէ՞ս կտրել ծիլդ աղաղուն.
Ինչպէ՞ս տալ քեզ կոյսին աղու
Որ դեռ չըզգար ցաւըս թաքուն:

Հեզ, սիրակաղձ, ո՛վ մանիշակ,
Զերդ երգերուն փրցուած սրտէս,
Դեռ չը խամրած, թօշնած համակ,
Զօնեմ քե՛զ ալ մինչ բուրեան ես:

Հ Ս Կ Ո Ւ Մ

Գիտէ՞ք, աստղե՛ր, մարդիկ ինչո՞ւ
Սիրտն այս աղջկան անապակ
Բերին այստեղ, ո՛հ, թաղելու
Մատուռին մօտ,՝ ծառին տակ:
... Իջէ՛ք, աստղե՛ր, բերէ՛ք ձեզ հետ
Ինձ իւր հոգին, ջինջ, սրբաւէտ:

Դռնո՛ղ վտակ, արդեօք առի՞ր
Հծծիւն մ'անոր թոքերէն,
Երբ հողն իջաւ, օրէնք մ'անգիր,
Կո՛ւրծքին վրայ ծանրօրէն:
Հոսի՛ր, վտակ, հոսիր առ իս,
Հծծիւնն անոր հեզէ սրտիս:

Տրտում յոյզեր, վաղն իրիկուն
Դարձեալ կ'անցնի՞ք գգուելով
Յիշատակը որբ, անանուն,
Կոյսին ննջած անխռով:
Անցէ՛ք յոյզեր, — կ'ուզեմ որ լա՛ն
Հոգւոյս վարդերն անոր վրան:

* * *

Ա. Ճ.-ին

Ճակտիդ կանաչ նարստին,
Հազար աղջիկ պարելէն,
Սա իմ սրտէն ցնծաղին
Հազար վարդեր թող կապեն:

Մեղրալուսնիդ ճամբուն վրայ,
Երբ դու ննջես, ո՛հ, բարի
Գիշերն այդ քաղցր յամենայ,
Եւ լոյս-երազ մ'երկարի...

Ո՛չ մէկ շարժում, ո՛չ մէկ շունչ
Թող գայ ցրել, խռովել
Գինովութիւնն հոգեշունչ

Գրկումներուդ... զի ահա՛,
Հոն ծով շողէն գգուանքի,
Սիրոյ ծիւ մը կ'ուռնանայ...:

ՔԵՐԹՈՂԻՆ ՀԱՄԱՐ ԵՐԴԻՆ ԻՐ ՂՍԱԿՆ Է

* * *

Ըսէ՛ ինձ, դալար ծաղկո՛ւն վարդենի,
Քեզմով երբ պճնեն օրրան թէ դադաղ,
Կ'զգա՞ս թէ բոյրըդ հոն միշտ կը տանի
Երգչի մը հոգին, — վշտի աչքն անթաղ:

— Սիրոյս տօնակն է, ծերուկ պարտիզպան,
Կ'ըսէ՛ր նոր հարս մը խինդ ու հեւք լանջին.
Փունջ մը վարդ կ'ուզեմ արծաթիս փոխան,
Երթամ զարդարել զաւկիս յակուրջին:

— Օրերը քեզի, ծերուկ պարտիզպան,
Հծծեց ուրիշ մը այտերը դեղին.
Փունջ մը վարդ կ'ուզեմ արծաթիս փոխան,
Որպէս յարդարանք զաւկիս դադաղին:

— Ինծի... երկո՛ւ փունջ, ծերուկ պարտիզպան,
Բայց չըլլա՛յ մարդիկ, — քովէն ձայն մ'եկաւ
Գիտնան թէ զուարթ խենդուկ այս տղան
Կեանքի թախիծը չը լքեց բնաւ:

= Քեզի ո՛չ մէկ փունջ, — քերթողին համար
Երգն իր պսակն է. ու երգի սնո՛ւնդ՝
Ամէն մէկ ըսպէ՛ մօին մէջ՝ անմար
Դողի պէս զգալ թէ՛ մահ, թէ՛ ծնունդ:

* * *

Ըսէ՛ ինձ, դալար ծաղկո՛ւն վարդենի,
Քեզմով երբ պճնեն օրրան թէ դադաղ,
Կ'զգա՞ս թէ բոյրըդ հոն միշտ կը տանի
Երգչի մը հոգին, — վշտի ա՛չքն անթաղ:

“ԿԻՆ ԴՈՒ, ԶԻ՞ ԼԱՍ”

Սուրբ կողերուդ սերունդներն են որ այսօր՝
Խարդաւանքի տիղմերուն մէջ կուրացած,
Կ'խաչեն զիրար, — մինչ աղօթքդ մենաւոր
Սուգը՝ կուլայ մայրութեանը խորազգաց:

Բայց դուն չէ՞ որ սիրել գիտես՝ ու տոկալ
Կեանքի էն խոր երկունքներուն իսկ դժնէ.
Լացող մէկդի՛. չարիքին դէմ ոճրածալ՝
Յանուն կեանքին դարձեալ ծնէ՛, մի՛ շտ ծնէ,

Ու սորվեցուր զաւակներուդ երբ մեծնան
Թէ աշխարհը տանջարան չէ, ո՛չ ալ բանտ,
Ալ հերի՛ք է, մարդիկ բարի թող ըլլան:

Կին դու, լսէ՛ ինձ ցաւերուդ մէջ հսկայ. —
Անցեալն այս չէր, ներկան այսպէս չմնար,
Եղբայրութեան վսեմ օրը պիտի գայ:

ԶԱՅՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

Փո՞ւճ է, կամ լոկ ցուցադե՛ղի մը ամէն մարդ:
Ու մերթ կ'իյնա՛յ մէջըս շող մը բազմերանդ՝
Մեռած հօր մը պատուիրանէն, որուն արդ-
Կը փարիմ զերդ մտքի նշխար ինձ ժառանգ. —

«Տարիներու դատանքիդ մէջ երբ ունայն
Նիւթին կերտած դահն ախտաժէտ դաւէ քեզ,
Ու դուն անցնիս ոստաններէն երկրին լայն,
Մարդերու մէջ որոնել Մա՛րդն Աստծու պէս,

Զգո՛յ՜ որդիս, երբ դայ մէկը որուն դուն
Աներկեւան կրնաս ընդմիշտ վստահիլ
Կինդ ու քրտակդ. ու հո՞ծ կռուի դաշտերուն՝

Յանձնել իրեն՝ վահանն եղող կեանքիդ բիլ՝
Զիդ ու զէնքդ, — գիտցի՛ր թէ ան կարմրարիւն
Բարեկա՛մդ է, Մարդն՝ Աստծո՛ւ պէս, անմագիլ:»

1937

ԱՊԱՀԱԻ

(Մերացած աղջկայ մը օրագրէն)

Ձը դիտցայ թէ վերջին պատահանքն էր սա
 Լաթը անարգ՝
 Տանն արգաւանդ իգութեանըս, ուր հիմա,
 Ա՛լ լըքուած յարկ,
 Սեւ շրդարչ մ'ինձ գուժէ թէ հոս ոչ մէկ հունտ
 Կ'առնէ սնունդ
 Ի սերունդ:

Ձէթն ըսպառած դժխեմ պատրոյդ մը մեծղի,
 Ես՝ ինձմով վերջ,
 Այժմ ցամքած մայրութեանըս, — որ յըղի
 Երբեք իր պերճ
 Գիծերն Աստուած չը քանդակէ՛ց, — տաճարին
 Կ'ողբամ լըռին
 Մեսիային:

Ինչո՞ւ դարձայ անհիւրընկալ, ինքնահիւծ
 Կին մը ամուլ,
 Ձիս ցանկացող արցունքներուն անմատոյց:
 Ու կարծես խուլ՝
 Անարձագանգ վիհը խաղցայ՝ սիրաւէտ
 Խօսքերուն հետ
 Ես յաւէտ:

Կոտորէ՛ր չողը կուսութեանըս անառիկ.
 Ու անարատ
 Մսիս սարսուռն պիղծ կոչէին բիրտ մարդիկ.
 Ըլլա՛ր առատ
 Նուիրումը կեանքին կապուած մեղքերուս...
 Ձըլլայի՛ միւս
 Մոմն անլոյս:

Ստինքներըս թարչամէին գիծ առ գիծ՝
 Վարդի մը պէս,
 Թաթերուն մէջ լաճի մ'անկուշտ, — անկսկիծ
 Հատնէի ես
 Կողերուս խորն ապրած երկունքը լըման՝
 Սուրբ, անսահման
 Մայրութեան...

ՅԱՆՈՒՆ ԴԱՐՁԻՍ

Պսակ ունիմ, մի՛ մերձենար դուն ի զուր,
Հին մեղքերուս անէծքն ինձ դեռ կը տանջէ.
Ա՛լ պոռնիկ չեմ, գթա՛ վրաս՝ ու մաքուր
Դարձիս վրայ աղօթք մ'ալ դուն մըմնջէ:

Զղջում հեզող հոգիներուն թոյն չե՛ն տար.
Կը պաղատի՛մ, մի՛ փորձեր զիս, — մա՛յր եղայ:
Եւ ուխտէս վերջ ըզքեզ ճանչնալ չեմ կրնար,
Զի օրէնք է, տե՛ս, մանկիկս ալ կը ճչայ:

Ծովն եմ նետեր իգութեանըս վերարկուն,
Սէրը վարձու, կուրծքն անառակ, չըթունք պիղծ,
Ու նոյնացեր մայրութեան հետ սրբանուն:

Սա քրտնաթոր ճակտիս վրայ չուրթըդ դի՛ր,
Վկայ երկինք քեզ կը ներեմ, ե՛լ, դնա՛,
Գնա՛, ո՛վ մարդ, յանուն դարձիս հեռացիր:

ՆԱԻԱՏՈՄԱՐ

Ա.

Տունն ետեւէս զիս կը կանչէ, — զաւկի՛ ձայն.
Ես ոտքերուս լուռ հետեւակ, — երկրի՛ ձայն.
Սիրտըս նաւակ՝ ես յոյզերու ծով միայն
Ճամբորդ ճարել աշխատեցայ, — ըլլա՛ր այն

Գրպանն աղքատ սիրտը՛ լեցուն մարդու ձայն:

Բ.

ՆԱԶԻԿԻՆ

Բաղձա՛նք. — զքեզ զատել միսէն փողփողէջ
Ու թողուլ որ տանին ինչ որ մարմին է.
Ապա փնտռե՛լ քեզ հոտեւան վարդի մ'մէջ,
Քան զի, քո՛ւրիկ, բոյրը ծաղկին հոգին է:

Տարրերուն մէջ, հողի՛ն, մարդո՛ց, ամէնքի՛ն,
Ինքնամատոյց յորդան սիրտը փնտռեցի.
Եւ նուիրման քրտինքին մօտ սակ ու գին
Մոռնա՛լ ընդմիշտ ու չ'ափսոսա՛լ: Ես ինձի՛

Բաղձա՛նք. — զքեզ զատել միսէն փողփողէջ,
Ու թողուլ որ տանին ինչ որ մարմին է.
Ապա փնտռե՛լ քեզ հոտեւան վարդի մ'մէջ,
Քան զի, քո՛ւրիկ, բոյրը ծաղկին հոգին է:

Բ Ա Ց Ն Ա Մ Ա Կ

(նկար 250-255 մը տար ինքի)

Քեզի, Հրա՛չ,
Իմին թխորակ մանչս,
Որ միսիս եւ ոսկորներուս առաջին հունձքը
եղար, երախայրին, ու զիս ապրող
իրերուն յաւիտենութեանը շաղկապող
խօսուն բա՛ռը.

Քեզի, Հրա՛չ,
Իմին չիրին ձագս,
Որ աղուոր աղջկայ մը անբիծ ու շուշան ծոցին
մէջ ծլար, եւ կնկայ մը ձեւին՝ որ քեզ վերար-
տադրեց՝ մօր պաշտանքը հատուցանելու մե-
ծութիւնը ուսուցիր ինծի.

Քեզի, Հրա՛չ,
Իմին խոշո՛ր պէպէկս,
Որ կորսուած մանկութիւնս տուիր ինծի ետ, ու գըր-
կիս մէջ՝ զիս ինքզինքիս փաստող աստուա-
ծային հայելին դարձար.

Քեզի, Հրա՛չ
Այս պահը՝ —
Յոյդերուս զիս օրօրող այս թախծա՛գին պահը,
Որ բերկրանք ալ է քեզմով:
Յ. Գ. Քան զի, աղուոր Հրա՛չս, կ'զգամ թէ հո՛ն՝
աշխարհի մէկ անկիւնը՝ մանուկ մը հիմա
զիս կը կանչէ, — Հարի՛կ, եկուր
«250-255» մը տուր ինծի:

Լոնտոն

1935

ԲԱՐԻ ԼՈՅՍ ՁԵՋԻ, ԲԱՐՈՎ ՆՈՐ ՏԱՐԻ

Ա

Բարի-լո՛յս, տղաս, բարով Նո՛ր-Տարի,
Սէրըս ծիածան վրադ կամարի:

Ես լուռ դաշտ մ'էի արդ դուն քաղցրահունչ
Առուակ մը իբրեւ կը դառնաս իմ շուրջ:

Մրմունջդ աղուական զրո՞յցն է արդեօք
Վարար մանկութեան իշխանին անհոգ:

Քշուող օրերէս ժառանգ քեզ ցաւ, վիշտ
Ձի մնա՛յ, տղաս, այլ նոր երգ մը միշտ:

Բարի-լո՛յս, տղաս, բարով Նո՛ր-Տարի,
Նորածագ տարին նոր յոյսով վառի:

Բ

Բարի-լո՛յս, երկիր, բարով Նո՛ր-Տարի,
Միտքըս ճառագայթ քեզի՛ կ'երկարի:

Լանջըդ արեւմառ մեհեան մ'է կարծես,
Սիրտըդ գերդ բազին կը քաշէ զիս քեզ:

Անձրեւէ՞ պիտի հոգիս թխպայորդ
Օր մը այգաբեր զով շունչէդ հաղորդ:

Գալիք երգերու գուսանն անանուն
Տա՛ր քեզ, հայրենիք, դափնի մ'ասմաղուն:

Բարի-լո՛յս, երկիր, բարով Նո՛ր-Տարի,
Հողիդ մէջ անմար արեւ ամբարի:

1935

Տ Ղ Ո Ւ Ս

Զուգեցի քեզ երակներու մէջ տանիլ,
Տանիլ ինձ հետ գերեզման.
Ու թոյլ տուի որ աղջնակ մը գեղածիլ՝
Տայ քեզ միւս ու կերպարան:

Տառապանքի ինձ անծանօթ ճա՞յն մ'ես դուն,
Փրթած կեանքիս էջէ մ'նոր,
Թէ՞ անպարփակ երանութեամբ թաթաւուն՝
Երկինք մ'աննենդ, սիրածոր:

Օրօրոցիդ շուքին առջեւ ծնրադիր,
Աչքերըս դոց ու լըռին,
Ինձ կը թուի թէ զիս այժմ նետեցիր
Ետ՝ յուսահատ անցեալին:

Բարեբաստիկ ճիչերուդ մէջ ես սակայն,
— Ես ինքս քեզմէ անմեկին —
Վա՛ղըս կ'երգեմ, ու յաղթական՝ ես միայն
Կ'տամ քեզ թիւին, համարին...

* * *

Ո՛ւշ դիր, տղաս — մուրհակը զոր ժառանգես,
Վաղը պիտի պարտք դառնայ.
Զի պահանջըս կեանքէն՝ կեանքիդ ետ՝ ըղբե՛ղ
Տուի որպէս պարտք հիմա:

Աւանդն որ արդ երակներուդ կը յանձնեմ,
Յաւերթութեան սաղմն է փակ.
Երդուի՛ր, տղաս, — ճիչ մը խորունկ — որ լսեմ
Թէ պիտի պահես զայն ատակ

Փոխանցելու պարտէզին մէջ կեանք մը նոր՝
Մարդեղութեան նըշանակ.
Քանզի հարկ է որ արմատներ բիւրաւոր
Հիւսուին օղակ առ օղակ:

Գիտցի՛ր, տղաս, օղակներն այս կը մնան
Լոկ իմաստը կենսայորդ
Մեր աշխարհին, — ուր այլապէս Աստուած մի՛այն
Պիտի դառնայ անուն խորթ...:

Վ Ե Ր Ա Ք Ա Ղ

... Ու արդէ կ'երգուրննամ ջնջե՛լ ձեզ՝ անզիղջ՝
Հլու եւ աղկաղք բառե՛ր բարեխիղճ,
Որ մերթ յոյգերուս կանչին լուսաթեւ
Դաւած՝ զիս տարիք աշխարհ մ'անարեւ:

Երբ հոգին, հնո՛ց, եռեփ գայ անդեկ,
Ի՛նչ ընեմ ես ձեզ, — գիտեմ՝ դիւրարեկ

Փայտով չեն դարբներ երկաթն ատրաշէկ:

ՅԱՂԱԴՍ ՄԱՏՈՒՅՄԱՆ

Հող տուր, ցո՛ղ տուր, —
Կառուցման մի՛ս արնակաղճ՝
Նոր կենցաղի նոր ատաղճ
Շաղախը՛ տուր:

Ոյժ տուր, յո՛յժ տուր, —
Ծոցն արեւով ուռճացած
(Տարբերն ոյժ են, ոյժն՝ Աստուած)
Միսին ձեւ տուր:

Ծափ տուր, թա՛փ տուր. —
Թրթռում, երանդ լուսառէջ
Պար ու խայտանք շունչիդ մէջ
Ձեւին կեա՛նք տուր:

Ձայն տուր, լա՛յն տուր. —
Մութը պատուող դերդ ճաճանջ՝
Երբ սի՛րտն յորդի՛ր ... բարձրալանջ՝
Կեանքին ե՛րդ տուր:

Կ Ա Յ Թ Ա Տ Օ Ն

Ձանգո՛ւ, ո՛վ Ձանգու, — օր մը երկնասոյց սիրտ մը՝ դեռ վճիտ,
 Ու յորդե՛ց Սեւանն՝ իբրեւ ամբարձիկ սիրոյ մի բաժակ:
 Ամէն քար խարակ, ամէն ծառ, ծաղիկ, հօտ ու ամէն՝ ցեղ
 Նետեր են հասակ:
 Ձանգո՛ւն է, Ձանգո՛ւն՝ կախուած Սեւանի երկնահուպ շուրթէն
 Մարմինը քափուր որպէս հոլանի աղջիկ լուսադէս,
 Ծմակ ու ծործոր, սար ու սարաւանդ հմայքէն իր վառ
 Կ'արբենան կարծես:
 Ձանգո՛ւն է, Ձանգո՛ւն՝ Սեւանի արծաթ կոնքին մէջ մութին
 Զինջ ու լուսաբիր աչքերը գողցած տնօրհնէք կ'որթայ...
 Ամէն գոմ, խրճիթ, տուն ու անդամատան աւարով յղկուն
 Կայթատո՛ւն հիմա:
 1937

Ն Պ Ա Ս Տ Ը

Me no got job, boss . .
 —One of millions

Թո՛ւք ես՝, պալա՛ր, ափիս նետուած ողորմութեան ամօթը՝ մերկ,
 Իբրեւ թէ քաղցն ամօքի:
 Հեզնակունչ ազոաւի պէս կը շրջիս թաղն՝ ու ձեռքէ ձեռք
 Պիղծ կարասն ես բերկրանքի:
 Քօղըս ծածուկ հպարտութեան երբ խոշտանդեն պատառ պատառ,
 — Օ՛ր, աղքատի ապրանքն հին —
 Կ'ատեմ քեզ, հա՛յ...: Վարձն անաշխատ ամէն փշրանք կոկորդս ի վար
 Գինն է մտքիս լկումին:
 Կ'ատեմ քեզ, հա՛յ, հաց լիութեա՛ն, մեղրաշաղախ ճաշըս գութի:
 Միջուկըդ գերթ մոլեխինդ
 Կը մրրկէ՛ զիս, — կատաղա՛նք մը ուրկէ թմբիրն այժմ կը կաթի
 Որպէս ժանտախտ մահախինդ:

Մա՛րդ, չեմ ուզեր միշտ առնելուն մուրը ճակտիս՝ հոս դիտապաստ
 Զոհըդ դառնալ, ջնջուիլ:
 Այլ ապերախտ՝ պնակիս հետ քեզ երկարող բազուկիս հաստ
 Ոյժը կաթիլ առ կաթիլ
 Քանդէ՛ ճամբուդ ջահերն ամբողջ, քանդէ՛ հացիդ շտեմարանն,
 Քանդէ՛ ամէն դանձանակ...
 Որ ինձմէ վերջ չը գտնես մէկն ըսպաննելու ողորմութեան
 Թա՛քած զաղիւր լուծին տակ:

ԿՇՈՒՆԻՆ ՎԵՐՋ

Կը խորտակուի՛ս.

Մառաններուդ երբ կ'որդնոտի ցորենն հազար պարկերով,
Խորհի՛լ թէ կան տամուկ աչքեր ուր փոսացած քաղցն է ծով:
Ու դեռ խորհի՛լ թէ կայ այլուր շուկան կըծող փորը մեծ
Դաս մ'ամբարիշտ, օ՛, յափրացած, դասն ուր երբեք չի ցանեց:

Կը խորտակուի՛ս.

Խարդաւանանքն այսքան պղծուտ երբեք ինկած չէր յղի.—
Երբ օրէնքով տունէն վրտար սա մարդն անդործ որ աղի
Գետ մը սրտին կ'անցնի մոլոր՝ փողոցներէն պերճ, լուսէ,
Հոն հեզնանքը սառ թրքիջով կ'ըսէ «չէնքը վարձու է»:

Կը խորտակուի՛ս.

Մին կը հիւսէ, մի՛շտ կը հիւսէ, կուտայ ոյժը կորամէջ
Որ երկարի ոսկաճամուկ բեհէզն առէջ առ առէջ.
Միսին յոյր ծալն անո՛վ պճնէ ապարանքին կոյսն անմիտ,
Ան ուր հիւսեց տարաւ զաւկին կոշտ կըտաւ մը քըղամիտ:

Կը խորտակուի՛ս.

Կը խորտակուի՛ս բիրտ դուն ո՛վ կարգ, դուն ուր դահեր կը
Արդարութեան նըժարին մէջ չիկայ տընանի, հարուստ վէս.
Ոչ ոք ծընաւ ձեռքին մուրհակ ... մուրհակ ոչ ոք կը տանի.
Վարձ, աշխատանք, կեանքն՝ հաւասար — կ'ըլլաս ուղի՛ն
մարդկայնի:

ՁԵՌՔԸԴ ԴԱՆԱՐ, ՎԱՐՉՔԸԴ ԿԱՏԱՐ

Ձեռքըդ դաւա՛ր,
Վա՛րձըդ կատար,
Դու հեռաւոր
Քոյրըս աղուոր:

Գիտեմ՝ այնտեղ
Այժմ աչաղեղ
Թագուհին ես
Այրերուն վէս,

Երբ կողք կողքի
Աշխատանքի
Թափին կուտաս
Հուր, ձեւ անհաս:

* * *

Ծոցըդ դալա՛ր,
Իղձըդ կատար,
Դու էմ բերրի
Կոյս նայիրի:

Երնէ՛կ անդին
Քու մանկիկին,
Զի պիտ' չըլլայ
Ա՛լ տէր, ծառայ,

Չերթա՛յ թափառ,
Վարձկան, օտար,
Այլ ինքն՝ իշխա՛ն
Հողին ու տան:

* * *

Երգըդ դալա՛ր,
Կանչըդ կատար,
Երկրանըւէր
Դիցուհին մեր:

Դառն ու փխրուն
Մեր յոյդերուն
Տո՛ւր նորազարթ
Շունչըդ՝ մակա՛րդ,

Որ երբ քեզ գանք,
— Խոստովանա՛նք —
Հայ կեանքը մենք
Խանդով երգենք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԻՈՐԻՆ

Ի՞նչ ճմռթկած դէմքըդ մուրոտ «խլէզի մը կը նմանի»,
Դու Հայաստան երկրին անմեռ արձանն ես վառ ու կենդանի:

Ցուպըս սօսախ, սիրտըս վարար՝ ես ծովէ ծով կ'որոնեմ քեզ,
Քե՛զ, հայրենի իմ քրտնաթոր մշակն անխոնջ արեւակէզ:

Քեզմո՛վ կ'ուռին հազարամեայ խոպան կուրծքերն հոն բունծ առ բունծ
Գորշ արտերուն... եւ դուն կ'ըլլաս բերքին առատ երգն հողեցունց:

Քեզմո՛վ՝ տուն տուն կը բաշխուին որպէս օրհնէնք խինդ ու ծիծաղ.
Քեզմո՛վ պիտի վաղուայ շէմքին Յաղթանակի բաշխեն մատաղ:

Եւ ալեւոր Մասիսն անթարթ նոր Օրէնքով պիտի հսկէ,
Որ չունենայ մին աւելի քան ան միւսը: Հինն ա՛լ փակ է:

* * *

Կ'որոնեմ քեզ.— ձայնիդ դերի՝ կամուրջն ետիս ալ վառած եմ,
 Ու մերթ զաւելիս եւ մօրն անոր սէրը մոռցած քեզ կ'որոնեմ:
 Կ'որոնեմ քեզ.— շունչը՝ ինկած հոգւոյս խորանն՝ փոթորիկ մ'է.
 Հին Սուրբերուս կ'զգամ նահանջն անվերադարձ՝ խուլ գուպարէ:
 Կ'որոնեմ քեզ.— յանուն դարձիս՝ լուսազուարթ լեզուդ ինձ տուր,
 Վաղնջական գուսաններուն ես դառնացած ճիչն եմ տխուր:
 Կ'որոնեմ քեզ.— ի՛նչ փոյթ մարդիկ կապար ցանեն, հնձեն ոսկի,
 Քու շողակաթ նոր երգերուդ վանկն հոգւոյս մէջ կը բռնկի:
 Կ'որոնեմ քեզ.— ըսէ՛ ինձի քու կրօն քրդ որ ալ չ'ըլլամ,
 Որ ալ չ'ըլլամ ես թափառիկ օտար մատրանց հիւր տարածամ:
 1934

ՀԱՆԴԷՍ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ

Հայաստանի ֆերթոյներուն

Ճողած հին հայն է,
 Որ դեռ կը ձայնէ.—
 «Ապրի՛ք, չէ՛ն մնաք, աղքատա՛ց համար», պնակը շրջուն
 Ծանօթ բայց զառամ
 Զերդ շուն մ'անատամ,
 Շնորհը գրկած կարծես կը սոնքա՛յ, որպէս զի անհո՛ւն
 Գանձէն այս՝ Հայկայ
 Նսեհն ուռճանայ:

Ճողած հին հայն է,
 Որ դեռ կը ձայնէ.—
 «Կաթիլ մը աբցո՛ւնք յանուն գաղթական որբի, սովեւոց».
 Ու կ'իյնայ անվերջ
 Դողդոջ մի կեղերջ,
 (Հեղնանքն անպատում յարութեան երգի զոհին վերախոց)
 Յատակը ճահիճ
 Վատերուն մահիճ:

* * *

Այլ եւ կայ նորը,
Հաւատքով խորը.—
Թիկունքն երկնամերձ Մասիսին յեցած՝ ոսկոր առ ոսկոր,
Իբրեւ աննահանջ
Մշակ բարձրականջ՝
«Թքնեմ մութրացկան եղբօր պնակին. կենցաղը մեր նոր
Արդար վաստակի
Մուրհակն է ոսկի:»

Հա՛, կայ եւ նորը,
Հաւատքով խորը.—
Յաղթարչաւ կեանքի դաւիթը բեղուն իբրեւ չինանիւթ,
Իբրեւ բազմալար
Երգ մը փրկարար,
Կը խառնէ հողին նայիրեան Երկրի դարերով անհիւթ
Ճաթած շերտերուն,
Խոնջած սրտերուն:

Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր

«Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի եւ զառաւօտն նաւասարդի...»
Որ երկհազար տարիներու Հայ հեթանոս տաղն հոգեգմայլ,
Սեւ պարտութեանց գոյժերուն դէմ դառնար ռազմերգ, շեփոր յաղթի,
Դուն մե՛զ եկար նորահրաշ ո՛վ Նոյեմբեր կարմրաշառայլ:

Խանձարուէդ չը ճանչցա՛նք քեզ մեր վաղքին մէջ խուճապահար,
Մըրկարչաւ Հիւսիսն անձար Հայ մսուրին երբ քեզ բաշխեց.
Ու կարծեցինք թէ աչքերդ են գեհեհատիպ վիհեր մթար,
Ճիշդ անսովոր՝ հուսկ մահէ՛րգը երկրին աւեր ու հողմածեծ:

Ձը ճանչցա՛նք քեզ, — եւ վաշխառու իշխաններուն մականին վարժ,
Մենք դեռ երէկ ուրացա՛նք քեզ իբրեւ մանուկ խորդ ու անյայտ.
Բայց արբունքի հասած ասպետ՝ կորովաբիր ու հոգեշարժ՝
Կուգաս այժմ շոպել հարսը՛դ, — Հայ սրտերու ո՛ւխտն ալեցայտ:

Ուխտը մե՛րն է, հողի՛ն, ջուրի՛ն, վերազարթնող Հայ նո՛ր գրին,
Յաւէրժական որպէս փարոս դուն մե՛րն ըլլաս լուսատարած.
Կարչնեղ բաղկիդ գիտնա՛ս պահել հայրենաւանդ պերճ թուրը հին,
Ա՛ն որ լքեց դայն վատօրէն դարձաւ անէ՛ծք թափառայած:

Արդ կը ջնջենք, մե՛ծ Նոյեմբեր, մեր պաշտումի խորաններէն
Թիւ ու տօնակ դոր մեր պարտուած աստուածներէն ժառանգեցինք.
Ինչ որ մնաց հին հաւատքէն կենսանորոգ՝ մենք համօ՛րէն
Այժմ անվարան քե՛զ կ'ընծայենք մեր շուրթերով տաղերգեցիկ:

Նորաշաւիդ Մեծ Համերգին դուն վառիվառ մէկ փոփոխակ,
Կը խառնես մեզ համայնական մտքի լոյսին՝ յորդ, անստուեր.
Աշխարհ մե՛զի՛ մենք աշխարհի՛ն՝ ոգուով ազատ ու անսայթաք,
Արեւափառ Հայաստանի Խորհրդային Տօն Նոյեմբեր:

ՀԱՅՐԵՆԻ ՀՐԱԽԻՐ

Ձի դաս վարձկան տղու պէս,
Ձի դա՛ս մուրալ բախտըդ զուր.
Կռուէն դարձող կուրծքը վէս
Տան կտրիճին պէս եկուր:

Սեւ ու ցամաք հաց կայ հոս.
Աշխատանքի քրտինք հուր.
Խոփըդ չալկած՝ անակօս
Դաշտի տենչով ինձ եկուր:

Հին տունն՝ աւեր, նորըս ցած
Հիւղակ մըն է դեռ անդուռ.
Յար կառուցման երգասաց
Մուրճն ու գամը առ եկուր:

Ո՛չ ապրչում, ո՛չ բեհեղ,—
Քուրջըս՝ տարա՛ղ ոսկեհուռ.
Չարքաչ կեանքի ընկերն հեղ
Տէղկեահ մ'ունիմ արդ, — եկո՛ւր:

Հաղար տարուան գաղթիդ մէջ
Հաղար անդունդ իջար լուռ.
Հոս վերելք կայ, ո՛չ վայրէջ,—
Մէջբըդ ժրէ՛ ու եկուր:

Չըսես՝ խոպան, արեւ՝խանձ
Հողաչերտ մ'եմ ես տխուր.
«Սահման քաջաց գէնն իւրեանց»,
Սուրբ՛ս մէջբիդ,— ե՛լ, եկուր:

Չարթի՛ր, ցաթե՛ց լուսադէմ,
Փողիս սրտէն քեզ ի լուր
Մասիսներու ես կա՛նչն եմ,—
Բարեւ բռնած հոս եկուր:

Ձի դաս վարձկան տղու պէս,
Ձի դա՛ս մուրալ բախտըդ զուր.
Կռուէն դարձող կուրծքը վէս
Տան կտրիճին պէս եկուր:

ՀԱՅՐ, ԱՆ ՄԵԾՑԱՅ

Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ

Հա՛յր, ալ մեծցա՛յ, — դեղահասակ, ճիգ ու դալար ես չաքիւլ,
Կ'ուզեմ պատուել ստուերիդ
Վրա՛նն՝ ու յորդ արեւին տակ արմատ նետել եւ ուռի՛ւ
Իբրեւ անտառ ծառախիտ:

Տարբերուն դէմ մոլեգնաբար՝ հունտը երբ դուն ճեղքեցիր,
Եղար կաղնի մ'հաստաբետ,
Կուշտիդ ես պիրկ՝ քեզմէ՛ ուսայ լքել պատեանն, ապա ժիւր՝
Կրել ասպարն հոգւոյն վետ:

Ու կատղաշունչ հողմը գոլթկան մտրակի պէս երբ շաչէ,
Եւ քամակըս մերթ կքի,
Կը ծռիմ լոկ արմատներու իմաց տալ թէ, — ոչի՛նչ է,
Ելեր ենք բաց մարդանքի...

Որպէս զի, հա՛յր, Մեծ Ջնջումին չըլլա՛ս ճարակ, ու անհետ
Կորչի ինձմով սեռդ ալ,
Երակներու հարկ է սփռել հո՛ւր մաքառման, 'ւտե՛նչն յաւէտ
Քեզմէ՛ բա՛րձըր սլանալ:

A leaflet from my "my love's album"

WHO GOES THERE

To Siranoush

Alone, gently, soft as the air,
Who goes there
By that road's half moonlit part,
That leads to my heart?

Blooming in white, o doubt, who goes there
With a mystic lure in her hair!
Is she a ghost? Or an angel of me to care
That goes there . . .

Now she smiles, charming but vague;
Then a whisper she comes to break.
And lo! how pure in light does a maiden's figure glare!
Yet, folks, tell me; is it my love that goes there?

WITH YOU

With you it was all love, sunshine,
With you the world seemed only mine;
With you the stars had more glitter;
With you the songs sounded sweeter.

Now that you're gone, my heart no more
Rocks me to sleep in tunes of yore;
And a day-dream far into night
Drives me, sweet love, like a spring-tide.


CROONING

Even if you're the sigh of a lone dying rose,
Or a short dream that by twilight fades away,
I want you come and take my bosom to repose,
To hope, to love and together kneel to pray.

Rivers on earth may some day change their ways off seas;
Gods of flowers fail to wake up spring time;
I sure each night climb a heaven's stairs to ease
Your days, my love, and hold you in my heart's rhyme.

հիմար
որպէսզմէն եւ քաջութի

Ա.ԳԼԵՃԵԱՆ



ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ
(ԱՅԳԼԻԷՐԵՏԷ)

ԷՄԻԼԻ ՏԻՔԻՆՍԸՆ
ԷՏՆԱ ՍՆԹ. ՎԻՆՍԷՆԹ ՄԻԼԷՅ
ՄԱՆՈՒԷԼ ԱԼԹՕՐԱԿԻՐԷ
ՖԷՏԷՐԻԿՕ ԿԱՐՍԻԱ ԼՕՐԳԱ
ԷՏՈՒԻՆ ՄԱՐԳՀԱՄ

ԷՄԻԼԻ ՏԻՔԻՆՍԸՆ

ՈՒՂԵՂՆ ԱԽԵԼԻ ԼԱՅՆ Է ԵՐԿԻՆՔԷՆ

Ուղեղն աւելի լայն է երկինքէն.—
Քան զի, դէ՛ր զանոնք մէկտեղ՝ քով քովի,
Առաջինն խկոյն պարփակէ պիտի
Միւսը, եւ քե՛զ ալ՝ լման, հեշտօրէն:

Ուղեղն աւելի խորունկ է ծովէն.—
Քան զի, դէ՛ր զանոնք՝ կապոյտ կապոյտի,
Սպունգի նման՝ առջինը պիտի
Ծծէ երկրորդը, տակաւ, յամբօրէն:

Ուղեղն ու Աստուած ճիշտ մէկ կշիռ են.—
Քան զի, բարձրացո՛ւր զանոնք՝ մաս առ մաս,
Իրարմէ անոնք պիտի հաղի՛ւ հաղ
Տարբերին՝ ինչպէս վանկը՝ հնչինէն:

ԷՄԻԼԻ ՏԻՔԻՆՍԸՆ

ԵԹԷ ԿՐՑԻ

Եթէ կրցի բեկման մօտ սի'րտ մ'ազատել,
Ի զուր ապրած չեմ բնաւ.
Եթէ կրցի մէ'կ վշտահար սփռփել,
Կամ ամոքել լոկ մէ'կ ցաւ,
Կամ նուաղած կարմրալանջ մը վերստին
Տանիլ հանգիստն իր բոյնին,—

Ի զուր ապրած չեմ բնաւ:

ԷՏՆԱ ՍԵԹ. ՎԻՆՍԷՆԹ ՄԻԼԷՅ

Վ Ե Ր Ե Դ Ե Ր Ձ Ը

Հողն իր հարազատ զաւկին չի ճանչնար.—
Ան՝ որ ետ կուգայ քաղքէն բազմամբոխ,
Կուգայ՝ մրոտուն, խոնջ ու ուժասպառ,
Փնտռել անտառին լուռ հանգիստը ճոխ.

Ան՝ որուն միակ ձգտումն է մոռնա'լ,
Մենակ ու խաղաղ՝ պառկի'լ օրն ի բուն,
Պառկի'լ տարինե'ր, գալիք դարե'րն ալ,
Զ'ածիլուած դէմքով մի ոմն անանուն.

Ան՝ որ, ա'լ վրէպ մը, վշտէն բթացած,
Ծախու էր հաներ բարեկամ թէ կին,
Փոխան այս ջերմիկ վայրին չքամած.—
Հանգի'ստ ... որ չունէ'ր չափն իր փնտռածին:

ԱՌ ՍԹՈՒՐՆԻՆՕ ՐԻՋ

(Գրաչար Բարեկամիս)

Հոս եմ, մենա՛կ, գրքերու մէջ,
Վաստակն ի՛մ իսկ տպագրատան,
Գիրքեր որոնք մերթ էջ առ էջ,
Ու տող առ տո՛ղ ձեռքէդ անցան:

Կ'երազեմ թէ դուն դեռ քովս ես,
Պատերազմէն ինչպէս առաջ.
Կ'երազեմ թէ դեռ կը գործե՛ս,
Ձեռքի, մտքի մշա՛կ դու քաջ:

Ահա գիրք մը մեծ Լօրդայէն,
Առջի ծիլն իր քերթուածներուն,
Ձոր շարեցիր լկեանքի հիւսկէ՛ն
Տուի՛ր անոր մամլովըդ դուն:

Գրաչար, քերթող իմ անբաժան
Մտերիմնե՛ր՝ չըկա՛ք հիմա.
Կրանատան խլեց Լօրդա՛ն,
Ու դուն ինկար Սօմօսիէրրա:

Բայց կ'երազե՛մ յաճախակի
Ձե՛զ ո՛վ ոյժի, փառքի բա՛րձունք.
Լօրդան՝ թագով նահատակի,
Քեզ՝ որպէս սուրբ լուսակնունք:

Աշխատաւոր դասի հերոս
Սաթուրնի՛նօ, գրաչա՛ր ընկեր,
Արդար դատի զոհերը հոս
Կռուի գծէն վերջն իսկ անմեռ

Կ'ապրի՛ն, — կ'ապրի՛ս, գրաչար ընկեր:

ՊԱՐԵՐԳ ԼՈՒՄՆԱՅԻՆ

Շքեղաճեւ, նարդօսած
Լուսինն ահա կ'իջնէ հնոց.
Ու տղայ մը մինչ անյարիւր
Կը դիտէ՛ր զայն, — լուսինը իր՝
Հողմածփուն միջոցին մէջ
Կ'երկարէ բաց թեւերը պերճ.
Եւ մերկ կուրծքը իր մետաղեայ
Ձինջ է, փայլուն գերդ շափիւղայ

— Փախի՛ր լուսին, փախի՛ր, — քան զի
Գնչուներն երբ հասնին քեզի,
Պիտի կտրե՛ն՝ սաթի նման
Սրտէդ՝ մատնի, ապարանջան:

— Թո՛ղ որ պարե՛մ, — լռէ՛, տղայ.
Գնչուներու սալին վրայ
Դու այս գիշեր, ա՛հ, մանկտի
Աչքերըդ խուփ սմքիս պիտի:

— Փախի՛ր լուսին, փախի՛ր, — արդէն
Ձիեր շատ մօտ կը վրնջեն:

— Ձգէ՛ տղայ, մի՛ աւեր դուն
Նշայուած իմ լաթերս փայլուն:

Հեծեալ ու ձի կուգան, կուգա՛ն.
Հսկաթաւալ թմբուկի ձայնն
Կ'իշխէ այժմ դաշտերուն լայն.
Աչերն մանկան, փոքր, աղուադէմ,
Կը պրկուին այս տեսիլքին դէմ:

Ձիթենիի բաց դաշտերէն
Գնչուներն՝ թուխ, երազելէն,
Կուգան շարք շարք՝ գլուխնին վեր,
Աչքերնուն մէջ քունն է ինկեր:

Կը լսէ՞ք բունն որ կ'արձակէ
Երկարաձիգ վայրեն մ'հոնկէ,
Մինչ լուսինը մանուկն առած
Կ'ճեղքէ երկինքն լայնատարած....:

Եւ դարբնոցին մէջ, խոր լա՛ց կայ,
Գնչուի լա՛ց եւ կոծ հիմա.
Եւ համասփիւռ որո՛տն անմար
Հովին որ մահ, մահ չիճանչնար:

ԷՏՈՒԻՆ ՄԱՐԳՀԱՄ

ԲԱՀԱԿԻՐ ՄԱՐԴԴ(*)

Եւ արաք Աստուած գմարգմ ի պատկեր իւր.
Ըստ պատկերի Աստուծոյ արաք գմա.
— ԳԻՐԳ ՄՆՆՈՑ

Կքած բեռան տակ դարերուն դժխեմ,
Կը կռթնի բահին՝ նայուածքը դետնին.
Կեանքի ունայնը դէմքն է պարուրած,
Եւ իր շալակին աշխարհ մը հոգ կայ:
Մէկն որ ալ չըզգար, ոչ իսկ կը յուսայ,
Ապուշ ու շուար՝ եղան լծակից:
Ո՞վ թուլցուց, ծռեց, կզակն այս վայրագ,
Ո՞վ ջնջեց գիծն այս հաստատ յօնքերուն,
Եւ իր գանկին մէջ լոյսը ո՞վ մարեց:

Ա՛յս է Ձեռակերտն Աստծու, որուն Ան
Թոյլ տուաւ իշխել ծովուն, ցամաքին.
Սուղիլ դէ՛պ աստղերն, որոնել երկնի
Ոյժը՝ եւ զգա՛լ տենչն Յաւիտենութեան:
Ա՛յս է երազը Անոր որ ձեւեց
Արեւներն լ'անոնց գծեց խոր ճամբան:
Ամբողջ դժոխքի խորշին մէջ յետին,
Ասկէ ահռելի ձեւ մը ա՛լ չի կա՛յ,
(Ո՛չ մէկ ճի՛շ՝ նետուած շահերուն դէմ կոյր,
Ո՛չ մէկ երեւոյթ ա՛յսքան չարգուշակ,)
Կուտակուած վտա՛նգ՝ տիեզերքին դէմ:

(*) Ներշնչուած՝ Միւէի աշխարհածամբ մէկ մկաթին առջեւ, որ կը պատկերէ
Իբրա աշխատամփի մէջ տեղեկութեան այլաբանական գործաւոր մը:
ՀԵՂԻՆԱԿԸ

Ի՞նչ անդունդ ի՞ր եւ հրեշտակներուն մէջ.
 Ինչո՞ւն պէտք իրեն — Գերին վաստակի —
 Պղատունն եւ կամ աստղահոյն երկնի.
 Ի՞նչ իրեն՝ երգի թրթռումն հեռարձակ,
 Փթթումը այգուն, կարմրին ալ վարդին:
 Ահռելի այս մարմնէն ցաւը՝ կը հոսի.
 Կեանքի ողբերգն այս կըռմին մէջն է:
 Ա՛հ, այս ձեւին մէջ մարդկութիւնն՝ ա՛յսքան
 Դաւաճած, խոշտանդուած ու ժառանգազուրկ,
 Կ'արձակէ բողոք մ'ընդդէմ Արարչին,
 Բողոք մ'որ նոյնքան դուշակութիւն է:

Ո՛վ դուք իշխաններ, տէրեր ո՛ղջ երկրի,
 Ա՛յս է ձեր ձեռքի ընծան Աստուծոյ,
 Հրէշատիպ այս ձե՛ւն, անհոգի, ծռած.
 Ի՞նչպէս ա՛լ պիտի մարմինն այս ուղղէք,
 Եւ Անմահութիւնն վառէք հոն դարձեալ.
 Տա՛ք իրեն ետ լոյս եւ տեսք ուղղաձիգ,
 Վերյուզէք իր մէջ նուազ ու երազ,
 Հատուցէք պարտքը հին անարդութեանց,
 Նենգի, ստութեանց, անբոյժ վէրքերու:

Ո՛վ դուք իշխաններ, տէրեր ո՛ղջ երկրի,
 Ապագան ի՞նչ այս մարդուն հաշիւ տայ.
 Եւ ի՞նչ պատասխան՝ վայրագ իր հարցին,
 Ձայնն ըմբոստութեան երբ ցնցէ չորս դին:
 Ի՞նչ պիտի ըլլայ բախտը դահերուն,
 Եւ անո՛նց որ զինք ըրին խեղանդամ,
 Երբ այս խուլ Սարսափն ելլէ դատել օր
 Մ'աշխարհն՝ այսքան դար լռելէն յետոյ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յառաջաբանի տեղ, — Վչտի Սափորէն	52
Թողութիւն	3
Ուրացայ Գեղ, — Չի մոռցա՛յ...	4
Տղաս, Չուրանաս	5
Ըլլայի	6
Ողջերթ	8
Երկրի Սէր, — Վերջին Սէր	9
Լսէ, հո՛ղ	10
Թուղթ Պարսաւանքի	11
Տապանազիր	12
Պատիժը	14
Սպիներ	15
Ի՞նչ է հոգին	16
Մահադդ	18
Մինչ Բուրեան ես	19
Հսկում	20
* * *	21
Քերթողին Համար Երգն Իր Պսակն է	22
«Կին Դու, Չի՞ լաս»	23
Ձայն Իմաստութեան	24
Ապաշաւ	25
Յանուն Դարձիս	26
Նաւատոմար	28
Բաց Նամակ	29
Բարի լոյս Ձեզի, Բարով Նոր Տարի	30
Տղուս	31
Վերաբաղ	32
	34
	63

Յաղագս Մատուցման
 Կայթատուն
 Նպաստը
 Կշռելէն Վերջ
 Զեռքը Դալար, Վարձքը Կատար
 Հայաստանի Գործաւորին
 Հանդէս Վերափոխման
 Նոյեմբեր
 Հայրենի Հրաւէր
 Հա՛յր, Այլ մեծցա՛յ
 Who goes there
 With you
 Crooning

Էջ
 35
 36
 37
 38
 39
 41
 43
 45
 46
 48
 49
 50
 50

ՅԱՆԿ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՑ

53

Ուղեղն աւելի լայն է Երկինքէն
 Եթէ կըցի
 Վերադարձը
 Առ Սաթուրնինօ Րիզ
 Պարերդ Լուսնային
 Բահակիր Մարդը

55
 56
 57
 58
 59
 61

Հեղինակի հասցէ՝

Alexander Kludjian
 238 East 36th St.
 New York City
 U. S. A.

37



1
4

ԳԻՆ 50 ՄԷՆԹ